համարեա ամբողջապէս ընկաւ Օսմանցւոց տիրապետութեան ներքոյ։

Այդ անդադար ասպատակութիւնները, պատերազմները սարսափելի կերպով աւերեցին երկիրը, եւ թափած արեան հեղեղներն ապականեցին նրան։ Աղուանից, Արցախի, Փայտակարանի եւ Ատրպատականի գաւառներում՝ մահ տարաժամ ընկաւ 1579 թուին, որին յաջորդեց մի սարսափելի սով։ Այդ աղէտների երեսից բնակիչների մեծ մասը կոտորուեց։ Ահա ինչ է գրում ականատես Յովհան Ծարեցի կոչուած Վարդապետը։

"Վայ պատժապարտիս, զի մահուամբ եւ սրով եւ սովու կոտորեալ մարդկան, մարմինք նոցա անյաղ գազանաց կերակուր եղեն. եւ շունք վայրենացեալք արտաքոյ շինի կենդանի մարդիկ եւս որսային, եւ գայլք ի ճանապարհի եւ ի շինամիջի, ի տունս մտեալ զմարդիկ ի ննջելն արտաքս քարշէին եւ ուտէին. եւ ի սովորիլ նոցա ի նոյն ի մէջ խաշանցն մտեալ, զխաշնարածսն ուտէին, իսկ զխաշանցն ինչ ոչ մեղանչէին։ Իսկ զԹիւ մահուամբ եւ սովու եւ սրով մեռելոցն եւ գերելոց բնաւ ոչ կամիմ ընդ թիւ բերել եւ ընդ գրով արկանել, բայց թէ զիմ զքարտէզս եւ զմելան առաջի ձեր արկից ըստ գպրացն Դաւթի, որ առ Երուսաղէմաւ։"

Սովն այնքան սաստկացաւ որ մարդիկ՝ ծածուկ սպանում էին երեխաներին եւ նոցա միսը խաշելով լափում էին։

Մի ուրիշ ականատես պատմագիր — Թադէոս վարդապետ Սեբաստացին հետեւեալ կերպով է նկարագրում Ղզլբաշների գործած աւերումները։